

Ա.	թմբիլի	իւրաելի
Ս. Տ. Հ.	իւրան	իւրաեց
Բ.	իւրաննան, իւրաննա	իւրանցան, ցննա
	իւրաննան	
Գ.	իւրանավ, իւրաննանավ	իւրանցավ, իւրանցնավ
Դ.	իւրանում, իւրաննում	իւրանցում, իւրանցնում
Ա.	(չունի)	
Ս. Տ. Հ.	միւնիւմնու, միւնիւմնու	
Բ.	միւնիւմնան, -նա, միւնիւմնանա	
Գ.	միւնիւմնում, նմնում	
Դ.	միւնիւմնավ, նմնավ, միւնիւմնումնավ	
Ա.	հու, հուվ,	հուլիքր, հուկր, հուլիքր
Ս. Տ. Հ.	հիւր,	հիւրանց, հուլիքր, հուկր
Բ.	հիւրան, հիւրանն	հիւրանցան, հուլիքրան, հուկր-
Գ.	հիւրանավ, հիւր-	ցան, հիւրանցնան, հուլիքրանան
	նրէս	հուկրանան
Դ.	հիւրանում	հիւրանցավ, հիւլիքրավ, հուկրավ
Ա.	փուր	փուրանի
Ս. Տ. Հ.	փորմվուրէր	փուրանց
Բ.	փորանվուրէր	փուրանցան, փուրանցնանա
Գ.	փորավուրէր	փուրանցավ, փուրանցնանավ
Դ.	փորումբվուր	փուրանցում, փուրանցնանում
Ա.	հիմէ	հիմէկր
Ս. Տ. Հ.	հըմէյիւ	հըմէկրու
Բ.	հըմէյա	հըմէկրա, հնէկրան
Գ.	հըմէյավ	հըմէկրավ
Դ.	հըմէյում	հըմէկրում
Ա.	իմմը	իմունի
Ս. Տ. Հ.	իմիմ	իմունց
Բ.	իման	իմունցան
Գ.	իմավ	իմունցավ
Դ.	իմում	իմունցում

Աերջինին համեմատ կը հոլովին նաև յունը, իւրանը, միւրէր, ծընէր և լն:

59. Ես նսքնին, Դու ինքնին ևն ձեւը Վարարազի բարառան մէջ կը բացատրուին էականներուն կը կուռիթեամբ. այսպէս. յս ու յս, ու ու ու, մասին ու մուսի և լն:

60. Ստացական յօդերն են ս, ր, ը (ձայնաւորի քոլ Յ), որնք կը դրուեն միշտ բառն վերջը. Օր. հացըս, հացրէս, հնցաս, հնցրնս, հնցավըս, հնցը, հնցրմը, հնցրնէս, հնցրմէր, հնցրնէս, հնցրնէն, հնցրաս, հնցրմէնեաս և լն և լն: Երբ գոյականին ընկերանան նաև յս ստացական աժականները, սոյն ստացական յօդերը կը նան անփոխիս պահուի, բայց կը նան նաև ը կը վերածուի. այսպէս՝ յի շօնը յի շօնը, յու ծեռավըր, յու ծեռավըր, յու անումըր, յու անու-

մը, յի մանմավըս, յի մանմավը, յի մանմէկրը, յի մանմէկրը և լն:

(Կը լորունակութիւն)

Հրաշեաց Յ. Անառեան



ՊԱՐԱՊ ՄԱՐԴԿԱՆՑ ԶՐՈՅՑԸ

(Տալսոյից)

Մէկ անգամ մի հարուստ տան մէջ հիւրեր հաւաքուեցան, և այնպէս եղաւ, որ կեանքի մասին լուրջ խօսակցութիւն սկսուեցաւ:

Ոչ միայն ոչ ոք իրեն բազգաւոր չիր համարում, այլ և չկար մի մարդ, որ ընդունէր թէ ինքը տպրում է այնպէս, ինչպէս մի քրիստոնեայ պէտք է ապրի: Բոլորը խօստվանում էին, որ իրենց և իրանց ընտանիքի համար հոգաբերի մէջ ընկած, աշխարհային կեանքով էին ապրում, և ոչ ոք իր մերձաւորի մասին չի մտածում՝ առաւել և Աստուծոյ մասին:

Սյոպէս էին խօսում հիւրերը միմեանց հետ, և բոլորն էլ համաձայն էին, մեզադըրելով իրենք իրենց իրենց իրեն անսաստուածներ, իրենց ոչ քրիստոնէավայել կեանքի համար:

— Ուրեմն ինչո՞ւ ենք այսպէս ապրում, — բացականչեց մի պատճի. ինչո՞ւ ենք այնպիսի բան անում, որին ինքներս չենք հաւանում: Միթէ մենք մեր կեանքը փոխելու կարողութիւն չունինք: Մենք ինքներս խօսուվանում ենք, որ մեզ գէտի կորուստ է տանում մեր շուայլութիւնը, փափկակեցութիւնը, մեր հարստութիւնը և, որ ամենագլաւաւորն է մեր հպարտութիւնը, մեր եղբայրներից բաժանուելը: Հարուստ և անուանի լինելու համար, մենք պիտի զբանակ մեզ այն բոլոր բաներից, ինչ որ մարդուս կեանքին հաճոյք է պատճառում: Մենք հաւաքուում ենք քաղաքներում, փափկութեան ենք սովորեցնում մեզ, փշացնում ենք մեր առողջութիւնը և չնայելով մեր վայելած

բոլոր զուարձութիւններին, դարձեալ մեռանում էնք ձանձրոյթից՝ ցաւելով, որ մեր կեանքը այնպէս չէ եղել ինչպէս պէտք է լինէր:

Խնձու ուրեմն, այնպէս պէտք է ապրենք, ինչն ու պէտք է մեր կեանքը և այն բոլոր բարիքները, որ մեզ տրուած է Աստուծոյ կողմից, պէտք է փշացնենք: Չեմ կամենում այլ ևս առաջուայ պէս ապրենք Կիժողնեմ սկսած ուսումն Զէ որ այն ինձ այլ բանի չպիտի հասցնէ, բայց եթէ նյն մաշող կեանքին, որից այժմ բոլորս գանգատուում ենք Կհրաժարուեմ իմ կարուծքից և կդնամ գիւղ աղքատների հետ ապրելու: Կսկսեմ նոցա հետ աշխատել, կսվորեմ ձեռքի աշխատանքին. և եթէ աղքատներին կհարկաւորուի իմ ուսումը, ևս իմ գիտեցածները կհաղորդեմ նոցա, բայց ոչ հիմնարկութիւնների և գրքերի միջացաւ, այլ ուղղուի եղբայրաբար ապրելով նոցա հետ:

— Այս, ես վճռեցի, ասաց նա, հարցական հայեացք ձգելով իր հօր վրայ, որ նոյն պէս այնուեղ էր:

— Քո ցանկութիւնը բարի է, ասաց հայրը, բայց թե թիւամիտ է և չմտածուած: Քեզ տմին բան այդպէս հեշտ է թուում, որովհետեւ դու կեանքը չես ճանուամ: Շատ բան մեզ բա է թուում: բայց բանը նրանուամն է, որ այդ լաւ բանի իրագործումը շատ բարդ է լինում և գժուար: Դժուար է լինում լաւ ճանապարհով գնալը: բայց աւելի գժուար է նոր ուղի բաց անելը: Այդպիսի ուղի բաց են անուամ միայն այն մարդիկ, որոնք կատարելապէս հասած են և ձեռք են բերել ոյն բոլոր բաները, ինչ որ մարդու համար հասանելի է: Քեզ համար հեշտ են թուում կեանքը նոր ճանապարհները, որովհետեւ դու գեռ չդիտես թէ ինչ է կեանքը: Այդ բոլորը թեթևամտութիւն է և երիտասարդական հպարտութիւն: Մենք ծերուն նրանք նրա համար ենք, որ ձեր ձգտութիւնը չտփառութենք և մեր փորձերով ձեզ առաջնորդենք. իսկ դուք՝ ջաշեներդ, պէտք է հպարտակալէք մեզ, որպէս զի մեր փորձերից ուղիւթիւնը մեր գործերից գույք է:

առաջիդ է, ոյժմ զու զեռ մեծանում եռ և դարձանում: Դաստիարակութիր, կրթութիր կատարելապէս, ոտի վերայ կանգնիր, ունեցիր քո սեղհական հասուատուն համար դումները, և այն ժամանակինոր կեանքը ոկար, եթէ այդ բանի համար ոյժ եռ դդում մեջզ: Եսկ առ այժմ զու ու պէտք է լուս քո բարիքը ինկատի ունենալով առաջնորդողներին, և ոչ թէ կեանքի նոր ուղիներ սլիմի բաց անես:

Պատանին լուեց, մեծերն էլ համաձայն նեցին հօր տառձներին:

— Դուք ճիշտ եք առում, դարձաւ դէղի պատանու հայրը այրական հասակի, ամուռա նացած մի մարդ: Ճշմարիտ է, սուոց նա, որ պատանին կեանքի փորձուութիւն չունենալով կարող է սխալուել կեանքի նոր ճառապարհներ լուց անելիս, և նորա որոշումը հասուատուն լինել չի կարող. բայց մենք բալորս էլ համաձայն ենք, որ մեր վարած կեանքը մեր խղճին հակառակ է և մեզ համար մար բարիք չի բերում: Իսկ այս պատճառով չի կարելի այս կեանքից գուրս դալու ցանկութիւնը իրաւացի չճանաչել:

Պատանին կարող էր իւր երեակայութիւնը մարդի հետեւզութիւն համարել բայց ես պատանի չեմ: և ձեզ իսր մասին կտուժէ: Այս երեկոյեան խօսակցութիւնները լսելով իմ գլխով էլ նյն միտքն անցաւ: Այս կեանքը, որ ես այժմ ունիմ, ինձ համար պարզ է, որ չի կարող ինձ խղճի հանդսատութիւն և բարիք պարզեցէ: Այս ինձ ցոյց է տալիս և փորձը և բանականութիւննը Աւարեմինին ինչ երեկոյ ընտանիքի համար եմ աշխատում: Իսկ հետեւանդքը գույք է դարձիս այն, որ ինքը էլ, իսր ընտանիքին էլ ասուածածավայել կեանքը չինք առղուում մեղքերի մեջ: Գործում եռ ընտանիքի համար, իսկ ընտանիքը հօ դը բանից ողուտ չունի: որովհետեւ այն, ինչ որ նոցա համար ես անում, բարիք չէ: Ես ոյս պատճառով ես յաճախ մատանամ եմ, թէ աւելի լաւ չեր լինի, եթէ ես իսր ամրող կեանքը փոխեի և անեի հենց այն, ինչ որ առաց երիտասարդը, — դադարէի ինո՞ւ և

երեխաներիս մասին մտածելուց և միայն հոգւոյ մասին մտածէի։ Զուր չէ ասել Պօսդոս առաքեալը, թէ առմուսնացածները հոգս են առնում կնոջ մասին, իսկ չամուսնացածները Առառնում մասին։

Ամուսնացածը դեռ խօսքը չէր վերացրել, երբ ամեն կողմից նորա վրայ յարձակուեցին այնտեղ եղող բոլոր կանայք և իւր կինը։

— Այդ մասին առաջ պէտք էր մտածել, ասաց տարիքն առած մի կին։

— Առել ես լուծը վիզդ, քաշիր։ Այդպէս ամեն ոք էլ կարող է ասել, թէ ազատուել եմ կամենում, երբ նորան ծանր կթուի ընտանիք պահելը և կերակրելը։ Այս խարէութիւն է և անաղնուութիւն։ Ոչ, մարդ պէտք է ընտանիքի մէջ կարողանայ աստուածահանոյ կեանք վարել։ Ապա թէ ոչ, այսպէս մենակ ազատուելը հեշտ է։

Եւ որ գլխաւորն է այսպէս վարուել, նշանակում է Քրիստոսի վարդապետութեան հակառակ դնար։ Աստուած պատուիրել է սիրել ուրիշներին, իսկ դաւք Աստուծոյ համար կամենում էք ուրիշներին վիրաւորել։ Ո՛չ, ամուսնացած մարդն ունի իւր որոշ պարտականութիւնները, որ նա չափսի արհամարհէ։ Ռւրիշ բան եթէ ընտանիքը արդէն ապահովուած լինէր։ Այն ժամանակ ձեզ համար ինչպէս ուզում էք, այնպէս վարուեք։ Իսկ ընտանիքի վերայ բռնանալու ոչ ոք իրաւունք չունի։

Բայց ամուսնացածը չհամաձայնեց այս բանի հետ, նա ասաց, են չեմ կամենում, ընտանիքս թողնել, ես միայն այն եմ ասում, թէ ընտանիքը և երեխաներին աշխարհային ճանապարհով չպէտք է առաջնորդել։ Զպէտք է տանել այնպէս, որ նոքա իրենց ցանկութիւնների համար ասպել սովորեն, ինչպէս որ մենք ասում ենք, այլ պէտք է այնպէս առաջնորդել, որ երեխաները փոքրութիւնից կարիքի վարժուին, աշխատութեան, մարդոց օգնութիւն տալու և, որ գլխաւորն է՝ բոլորի հետ եղբայրական կեանք վարելու սովորեն։ Իսկ այս բանի համար պէտք է հրաժարուել հարստութիւնից և անուանի դառնալուց։

— Կարիք չկայ ուրիշներին վարժեցնելու, բանի դեռ ինքդ էլ աստուածահանոյ կեանք չունես, տաքացած սլատասխաննեց կինը նորա խօսքերին։ Դու ինքդ չահել հասակումդ քո քերին ապրել ես, էլ ինչո՞ւ ես կամենում քո երեխաներին ու քո ընտանիքը տանջել։ Թող որ հանդիսա մեծանան, այնու հետեւ արդէն իրանք ինչ որ կամենան, այն կանեն, և ոչ թէ դու ստիպես նոցա։

Ամուսնացածը լոեց, բայց այնտեղ եղող մի ծերունի նորա կողմը պահեց։

— Ենթագրենք, ասաց նա, ամուսնացած մարդուն չի կարելի ընտանիքը, մէկ անդամ որոշ վայելքների վարժեցնելուց յետոյ, յանկարծ զրկել այդ բոլորից։

Ճշմարիտ է, որ եթէ մէկ անդամ արդէն սկսուած է երեխաների դաստիարակութիւնը, այն ժամանակ աւելի լաւ է մինչև վերջը տանել, քան բոլոր անցածը ոտի տակ տալ։ Մանաւանդ որ մեծացած զաւակները իրենք կարող են ընտրել այն ճանապարհը, որ իրենց համար լաւ կհամարեն։ Ես համաձայն եմ, որ ամուսնացած մարդու համար շատ դժուար և մինչեւ անդամ անհնար է առանց մեղք դործելու իւր կեանքը, փափելը։ Իսկ ահա մեղք՝ ծերունիներիս, Աստուած էլ պատուիրում է այդ։ Ես իմ մասին կասեմ, ես այժմ ապրում եմ առանց որ և է պարտականութեան, ապրում եմ ստամբուլի համար, ուտում եմ, խմում հանդստանում, — իսկ ինձ համար այս զգուշի է և ատելի։ Ահա ժամանակ է արդէն, որ ես թողնեմ այս կեանքը, բաժանեմ իմ ստացուածքը և մահից առաջ գոնէ այնպէս ապրեմ, ինչպէս Աստուած պատուիրել է ապրել՝ քրիստոնեաց։

Ծերունու հետ էլ չհամաձայնեցին։ Այստեղ էր նորա եղբօր աղջիկը և սանամերը, որի բոլոր երեխաներին նա կնքել էր և տօն օրերը միշտ ընծաներ էր տալիս նորան, այստեղ էր և նորա որդին։ Բոլորը նորան հակառակ էին խօսում։

— Ոչ ասաց որդին, դու արդէն քո կեանքումդ շատ ես աշխատել, այժմ պէտք է հանդստանաս և քեզ չտանջես։ Դու 60 տարի ապրել ես քո սովորութիւններով, եւս

կարող յետ կենալ: Դու միայն զուր տեղը
պիտի չարչարես քեզ:

— Այս, այս, հաստատեց եղբօր աղջիկը:
կարիքներ կունենաս, տրամադրութիւնդ տե-
ղի լի լինի, կակսես քրթմնջալ, և աւելի
շատ մեղքերի տակ կընկնես: Խոկ Աստուած
բարեսիրու է և բոլոր մեղաւորներին թողու-
թիւն է տալիս, ուր մնաց քեզ՝ իմ բարի
հօրեղբօրու:

— Եւ խակապէս ի՞նչներիս է պէտք, աւե-
լացրեց մի ուրիշ հասակալից ծերունի: —
Մենք ըեւ հետ թերես միայն երկու օր այլ-
ևս ապրենք: Ել ի՞նչ կարիք կայ նոր բաներ
հարելու:

— Ի՞նչ զարմանալի բան է, ասաց հիւ-
րերից մէկը (նա ամբողջ ժամանակը լուռ-
էր), ի՞նչ զարմանալի բան: Բոլորս ասում
ենք, որ լաւ է աստուածահաճոյ կեանք վա-
րելը, և որ վաս ենք ապրում, հոգւով և
մարմով էլ տանջուում ենք, բայց հենց որ
բանը հասաւ գործին, դուրս է գալիս որ
երեխաներին ուղղել չի կարելի, պէտք
է նոցա դաստիարակել ոչ աստուածահա-
ճոյ ուղղութեամբ, այլ հին ձևով: Երիտա-
սարդները չեն կարող ծնողներին հակառակ
գնալ, և պէտք է ապրեն ոչ թէ աստուածա-
հաճոյ կեանքով, այլ հին ձևով: Ամուսնացա-
ծը չի կարող իւր կնոջը և երեխաներին ուղ-
ղել, և պէտք է ապրեն ոչ աստուածահաճոյ,
այլ հին կեանքով: Խոկ ծերունիներին էլ
կարիք չկայ սկսելու: միայն երկու օր է
մնացել ապրելու: Դուրս է գալիս որ բարի
կեանքով ապրել չի կարելի. կարելի է
միայն խօսել:

Ք. Մ.



ԵՐԿՐՈՎՈՐԾԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

(Եարունակութիւն) *

ԿՈՐԿՑԻ ԴԵՄ ԿՈՌԵՆԵԼՈՒ ՄԻՋՈՅ.

Կարկուտն ամենայն տարի աշադին վնաս-
ներ է պատճառում երկրագործական արդիւ-
նաբերութեան: ցանքերն և առհասարակ բո-
լոր պաղաքեր բոյսերը այդ աշարկու թշնա-
մուց աղաս կացուցանելու համար զանազան
երկներում փորձած և մինչև այժմն գործ
դրած միջոցները համարեա անօգուտ են ան-
ցել: Դեռ անցեալ գարում փորձեր էին անում
օդի մէջ առանց զնառակի թնդանօթներ արձա-
կելով մի կողմից երաշտի, միւս կողմից կարկոտի
գէմ կոռուելու: Վերջին ժամանակներս այդ
փորձերը կրկին արուեցան, և արհեստական
անձրեւ առաջ բերելու փորձը անյաջող անցաւ:
Խոկ ի՞նչ վերաբերում է երկրորդ նպատակին,
Արևմտեան Եւրոպայում Շափերի եղանակով
կատարած փորձերը այն հետեւանքներն առաջ
բերին, որ կարկոտի գէմ կոռուելլ այնքան էլ
անհնարին բան չէ, ինչպէս այդ կարծում են
շատերը: Արևմտեան Եւրոպայի մի քանի տեղե-
րում ամպերի միջից ելեկարականութիւնը
դուրս բերելու համար փորձեցին շինել ուուր
մետաղեայ ծայրեր ունեցող երկար ձողերի
ձևով կարկարդելքները: Այդ փորձը խիստ
մեծ ծախոք էր պահանջում, ուստի և սպա-
սած նպատակին չհասաւ: Մինչդեռ անկաս-
կածելի է, որ երբ որոշ գէպքերում օդը յա-
դիցած է լինում ջրային գոլորշիներով փոքրիկ
տառանումը կամ ցնցումը կարող է խանգա-
րել նրա մասերի հասարակշուութիւնը, ահա
այդ պատճառով էլ մի քանի մարդկանց մէջ
միաք յղացաւ պաշտպանել ցանքերը կարկոտ
աւերիչ ներգործութիւնից թնդանօթներ ար-
ձակելով: Դաշտերը կարկոտից պաշտպանելու
այս միջոցը գործադրում է Եւրոպայի շատ

*) Տես. Ար. հմ. Դ.